



Շաքին տնտեսական եւ բնապահպանական խնդիրները հավասարակշռող լավ մոդել

• Շաքիի ջրվեժի խնդիրը լուծում է սահմանում. ջրվեժը կգործի հստակ ժամային գրաֆիկով

Հայաստանի ամենաբարձր ջրվեժը՝ Շաքին, որն ունի հիդրոէներգետիկ, գյուղատնտեսական, զբոսաշրջային կարեւորություն, բնապահպանների մշտական մտահոգության կենտրոնում է: «Շաքի ՓՅԷԿ»-ի աշխատանքն ազդում էր ջրվեժի ջրատվության վրա: Բնապահպանության նախարարությունում դեռեւս հունվարին էին որոշել խնդրին վերջնական լուծում տալ: Ժամային գրաֆիկ սահմանելու առաջարկը նախարար Արծվիկ Մինասյանին էր. Նա առաջարկել էր ցերեկային ժամերին ջրահոսքն ամբողջությամբ ուղղել ջրվեժ, իսկ գիշերային ժամերին՝ ՓՅԷԿ-ը շահագործել: Այսպիսով, Շաքի-

ի ջրվեժն այսուհետ կգործի հստակ ժամային գրաֆիկով: Մարտի 15-ից ապրիլի 30-ը եւ հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 15-ը զբոսաշրջիկները ջրվեժի ամբողջ գեղեկցությունը կարող են վայելել 11:00-ից 17:00-ն, իսկ մայիսի 1-ից սեպտեմբերի 30-ը՝ 11:00-ից 19:00: Ժամային այս գրաֆիկը մշակվել է տուրիստակա գործկալությունների հետ քննարկումների արդյունքում հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում զբոսաշրջիկների այցելությունների քանակը: Ըստ նախարարի՝ դա կարող էր դառնալ տնտեսական եւ բնապահպանական խնդիրները հավասարակշռող լավագույն լուծումը: Շահագրգիռ կողմերի միջեւ տեւական քննարկումներից հետո նախարարի առաջարկը կյանքի կոչվեց: Օրերս նախարարությունը «Հակոբջանյան եւ Գալստյան ՀԷԿ»-ին տրամադրեց ջրօգտագործման թույլտվությունը: «Հակոբջանյան-Գալստյան ՀԷԿ»-ի սեփականատերերը տարիներ առաջ այն ձեռք բերելիս ջրվեժի աշխատանքի ապահովման որել է պարտավորություն չէին ստանձնել: ՓՅԷԿ-ի համասեփակաւատեր Աղասի Հակոբջանյանի խոսքով՝ որպէս քաղաքացիներ ջրվեժի ճակատագրով մշտապես մտահոգվել են: 20 տարվա ընթացքում իրենք հարցը բազմիցս բարձրաձայնել են, սակայն խնդրին այդպէս էլ լուծում չէր տրվել: Վերջապէս խնդիրն այս տարբերակով ստացավ կողմերի համար լիովին ընդունելի լուծումը:

Կառուցապատել առանց էկոհամակարգին վնաս պատճառելու

«Չայաստանում չի իրականացվելու որևէ կառուցապատում, որի հետևանքով էկոհամակարգին վնաս կպատճառվի», - այս մասին այսօր Գոշ լճի խնդիրների նվիրված հանրային քննարկման ժամանակ հայտարարեց բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը: Նա նախ նշեց, որ բնապահպանության նախարարությունը պատրաստ է, ոչ միայն սահմանված օրենքներով վերապահված գործառույթներն իրականացնել, այլև բնական ռեսուրսների ամբողջ կառավարման համակարգը դարձնել պետության, սերունդների համար կայուն զարգացման հիմք:

Նախարարը հայտարարեց, որ ներկայումս տարածքում գործողություններ չեն իրականացվում և վիճակի գնահատման մասին ծառայողական քննություն է արվում: «Որևէ վարքագիծ այնտեղ չի կարող դրսևորվել վարձակալի կողմից, քանի դեռ չի անցել պատշաճ փորձաքննություն», - ասաց նա: Արծվիկ Մինասյանը նշեց, որ արդեն ծառայողական քննության ժամանակ նկատողություն է հայտարարվել տարածքի անտառապահին, քանի որ առնվազն մեկ պետք է տեղեկացված լիներ: Նա ասաց, որ Գոշ լճի ափին ձևավորված տիղմի մաքրումն իրականացնելու է Ազգային Պարկը՝ վարձակալի ֆինանսավորմամբ: «Մենք հետևելու ենք, որ վարչական պատասխանատվության ենթարկվի նախաձեռնողը, ով իրականացրել է այս գործողությունը առանց պատշաճ փորձաքննություն իրականացնելու», - ասաց նա՝ ավելացնելով, որ ապօրինի և վանդալիզմի հասնող վարքագրությունները տարբեր տեղեր են արձանագրվում: «Մենք փորձում ենք իրականացնել մեր կարողությունները, բայց մենք ամբողջ համակարգում ռեֆորմի խնդիր ունենք: Մեր նպատակն է կանխել, բացառել որևէ երևույթ, որը վնաս է տալու մեր բնությանը: Չի լինելու մի կառուցապատում, որն էկոհամակարգին վնաս է տալու», - վստահեցրեց նախարարը:



րարը: Արծվիկ Մինասյանը նշեց, որ Դիլիջան պարկը 34 հազար հեկտար տարածք է ընդգրկում և միայն մարդկային ներուժով հսկելը բարդ է, դրա համար միջազգային գործընկերների հետ համագործակցելով փորձում են ժամանակակից տեխնիկական միջոցներով ձեռք բերել: Ակտիվիստ Չայկ Մարկոսյանն, ասաց, որ իրենք ոչ թե ակտիվիստներ են, այլ պարզապես մտահոգ քաղաքացիներ: Ըստ նրա՝ եթե այդքան օրենքներ են խախտվել, ապա ինչն է պատճառը, որ պայմանագիրը չեն խզվում: Նախարարը պատասխանեց, որ օրենքը հղում է տալիս պայմանագրային հիմունքներին և իրենք հիմա շարժվում են պայմանագրով:

«Մենք կասեցրել ենք որևէ գործողություն այնտեղ», - ասաց նա: Չայկ Մարկոսյանն արձագանքեց, որ իրենք չգիտեն բնությունն ունից պաշտպանեն, և տպավորություն է, որ նախարարությունից ևս պետք է այն պաշտպանել: Քննարկման մեկ այլ մասնակից, Արմեն Ավագյանը հայտարարեց, որ այնտեղ արմատախիլ արված ծառեր կան և ներկայացրեց դրանց լուսանկարները: Նախարարն էլ նշեց, որ տեսչությունն աշխատում է այնտեղ և դեռ աշխատանքները չեն ավարտվել, իսկ վարձակալը պարզաբանել է, թե պարզապես ցանկացել է մաքրել տիղմը՝ չհիմնալով, թե բնությանը վնաս է հասցնում: Ակտիվիստները մաս բարձրացրին աղբահանության խնդիրը, որին նախարարը խոստացավ լուծում տալ: Ի դեպ, նախարարը շնորհակալագիր հանձնեց ակտիվիստ Տիգրան Շահբազյանին՝ բնապահպանության ոլորտում կատարած աշխատանքի և բացահայտումների համար:



Վայոց ձորում նախարարի օրակարգը խիստ հազեցած էր

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը մասնակցել է «Էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելներ» ծրագրի շրջանակներում իրականացվող Վայոց Ձորի մարզում կայացած մի շարք միջոցառումների: Մարզ այցի մեկնարկը տրվել է Եղեգնաձորի գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոնի բացման արարողությամբ: Հանդիսավոր միջոցառմանը մասնակցել են նաև Վայոց Ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, ՀՀ-ում Գերմանիայի փոխդեսպան Նադիա Լիխթենբերգերը, Վայոց բնության համաշխարհային հիմնադրամի /WWF/ հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Կարեն Մանվելյանը, CARD հիմ-



նադրամի տնօրեն Գագիկ Սարգսյանը և այլք: Սպասարկման կենտրոնը հիմնվել է WWF-Հայաստանի և «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի»՝ CARD հիմնադրամի կողմից Գերմանիայի դաշնային հանրապետության ֆինանսական աջակցությամբ և ՀՀ բնապահպանության նախարարության անմիջական մասնակցությամբ: Շնորհավորելով նորաբաց կենտրոնի կապակցությամբ՝ նախարար Արծվիկ Մինասյանը նշել է, որ նորաբաց կենտրոնի ստեղծումը հնարավորություն կտա նաև նվազեցնելու ճնշումը բնական ռեսուրսների օգտագործման վրա, նպաստելով բնապահպանական մի շարք հարցերի լուծմանը: Կենտրոնի ծառայություններից հնարավորություն կունենան օգտվել 4 տասնյակից ավելի համայնքներ: Այն գյուղացիական տնտեսություններին տրամադրելու է ոլորտային տարբեր ծառայություններ, դառնալու է կամուրջ՝ ֆերմերների և միջազգային կառույցների միջև, նաև՝ հագեցած է լինելու անասնաբուժական և արհեստական սերմնավորման ժամանակակից սարքավորումներով: Կենտրոնն իրականացնելու է նաև կրթական գործառնություն: Կազմակերպվելու են սեմինարներ և դասընթացներ՝ հայ և արտերկրի մասնագետների կողմից: Նախարարի հեթեթական կանգառը խաչիկ գյու-



ղում էր: Այստեղ WWF-Հայաստանի, ԳԵՄԻԿ միջհամայնքային բնապահպանական հիմնադրամի և Խաչիկ համայնքի միջև ստորագրվել է «Բնության պահպանության եռակողմ համաձայնագիրը»: Համագործակցության արդյունքում համայնքին է հանձնվել գյուղտեխնիկա և շուրջ 4000 պտղատու տնկիներ, որոնք համայնքի համար կլինեն այլընտրանքային եկամտի աղբյուր: Արծվիկ Մինասյանը կարևորել է այս տարածաշրջանում Հարավային Կովկասի արևելյան միջանցքի կենսաբազմազանության ամբողջականության պահպանությանն ու համայնքային զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, նշել, որ դրանք կնպաստեն համայնքների կողմից կենսաբազմազանության միջոցով ստացվող սոցիալ-տնտեսական օգուտների բազմապատկմանը: Նախարարի խոսքով՝ համայնքին տրամադրված օգնությունը, ինչպես նաև՝ հողատարածքների արդյունավետ օգտագործումը կնպաստի գյուղի զարգացմանը, իսկ նոր համագործակցությունն էականորեն կխթանի էկոմիջանցքների ստեղծման աշխատանքները, որոնք իրականացվում են Գերմանիայի կառավարության ֆինանսավորմամբ՝ «Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ստեղծմանն աջակցություն» տարածաշրջանային ծրագրով: «Այս ծրագրի մեկնարկով մենք սկսում ենք էկոմիջանցքների քաղաքականության պրակտիկ իրագործումը, որպեսզի մեր հարուստ կենսաբազմազանության պայմաններում, հատկապես, կենդանական աշխարհը կարողանա էկոմիջանցքների միջոցով ազատ տեղաշարժվելու հնարավորություն ունենա:

շարունակությունը էջ 4 /



• Վայոց ձորում նախարարի օրակարգը հազեցած էր և արդյունավետ

Սկիզբը՝ էջ 31

Իսկ դա նշանակում է, որ այն համայնքները, որոնք գտնվում են այդ հատվածում, պետք է ստանան հնարավորություն, որպեսզի մի կողմից չվնասեն կենդանական աշխարհը, մյուս կողմից օգտվեն և սեփական եկամտի աղբյուրներ գտնեն ի դեմս զարգացման տարբեր ուղղությունների, այդ թվում՝ նոր ամստառների հիմնումը, ինչը ոչ միայն կփոխի կլիմայական պայմանները խաչիկ համայնքում, այլև նաև հնարավորություն կտա խաչիկցիներին ամստառային բարիքներից նույնպես օգտվելու որպես իրենց եկամտի կայուն աղբյուր»,- նշել է նախարարը: Արծվիկ Մինասյանն այցելել է նաև «Գնիշիկ պահ-

պանվող լանդշաֆտ»: Այստեղ նախարարին են ներկայացվել պահպանվող տարածքում նախանշվող ծրագրերը, զբոսաշրջության խթանմանն ուղղված և Հայաստանի Կարմիր զրթում ընդգրկված կենդանատեսակների և բուսատեսակների պահպանության աշխատանքները, դիտակետից հետևել բեզոարյան այծերի տեղաշարժին: Այցի ավարտին բնապահպանության նախարարը պատասխանել է նաև լրագրողների հարցերին՝ անդրադառնալով բնապահպանական մի շարք խնդիրների, այդ թվում, բնության հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակին, տեսչական բարեփոխումներին վերաբերող հարցերի:

Բնապահպանության նախարարության մեծ բարեկամ Ամերիկահայ ճարտարագետների եւ գիտնականների ընկերակցությունը շարունակում է աջակցությունը



Վերանորոգումից առաջ

Վերանորոգումից հետո

Շարունակվում է Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցության աջակցությունը ՀՀ բնապահպանության նախարարությանը: Այս անգամ ընկերակցության կողմից վերանորոգման աշխատանքներ են կատարվել ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ում: Լաբորատորիայի տանիքի անմխիթար լինելու պատճառով անձրևների և ջնհալի ժամանակ ջուրը լցվում էր անմիջապես լաբորատորիա՝ վնասելով լաբորատոր սարքավորումները և

խանգարելով բնականոն աշխատանքները: Լիովին վերանորոգվել է ամբողջ տանիքը՝ մոտ 1000 մ: «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը իր խորին շնորհակալությունն է հայտնում «Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերությանը» կատարված խիստ անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների համար: Վերանորոգումից առաջ և հետո կատարված կից լուսանկարները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու արված աշխատանքների կարևորության մասին:

Ապօրինությունները եւ հանցագործությունները վերջին օրերին հասել են աննախադեպ չափերի



«hetq.am» կայքում հրապարակված տեղեկատվության և ՀՀ բնապահպանության նախարարության «Թեժ գծով» ստացված ահազանգերի հիման վրա Բնապահպանական պետական տեսչության աշխատակիցները, ՀՀ ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատակիցների, «Դիլիջան» ազգային պարկե ՊՈԱԿ-ի, Հայաստանում Կովկասի բնության հիմնադրամի ազգային համակարգող Արման Վերմիշյանի, քաղաքացի Տիգրան Շահբազյանի հետ համատեղ, «Դիլիջան» ազգային պարկի «Հաղարծին տեղամասի» 6-րդ պահաբաժնում իրականացրել են լրացուցիչ տեղազննություններ, ինչի արդյունքում հայտնաբերվել են ապօրինի հատված 43 հատ հաճարենի, 31 հատ բոխի, 11 հատ կաղնի, 2 հատ թխկի և մեկ հատ հացենի տեսակի տարբեր տրամագծերի ծառեր: Հաշվարկվել է 17.365.790 ՀՀ դրամի պետությամբ պատճառած վնաս: Տեղում առկա է եղել 125,38 խմ վա-

ռելափայտ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Իջևանի անտառտնտեսության» Իջևանի անտառպետության թիվ 5-րդ պահաբաժնի տարածքում Բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժնի աշխատակիցները, ՀՀ ոստիկանության Իջևանի բաժնի և Տավուշի մարզպետարանի աշխատակիցների հետ համատեղ տեղում իրականացրել են ուսումնասիրություններ, ինչի արդյունքում հայտնաբերվել են ապօրինի հատված 72 հատ հաճարենի, 9 հատ բոխի և 3 հատ կաղնի տեսակի տարբեր տրամագծերի ծառեր: Հաշվարկվել է 13.998.450 ՀՀ դրամի պետությամբ պատճառած վնաս: ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության նախապատրաստած նյութերն ուղարկվել են իրավապահ մարմիններին:

Առանց ռիսկերի գնահատման ընդերքն օգտագործելն անչափ վտանգավոր է

Ապրիլի 20-ին կառավարության միստի մեկնարկին վարչապետ Կարեն Կարապետյանը հերթական հանձնարարականներն է ուղղել գերատեսչություններին: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Սինասյանին վարչապետը հանձնարարել է եռամսյա ժամկետում, հաշվի առնելով միջազգային փորձը, մշակել և կառավարության աշխատակազմ ներկայացնել իրավական ակտերի փաթեթ, որով կկանոնակարգվի ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման և հաշվետվողականության հետ կապված ըն-



թացակարգերը: «Ընդերքօգտագործման ոլորտում շրջակա միջավայրի ազդեցությունների շարունակական գնահատումը և մոնիթորինգը կարևորվում է հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման տեսանկյունից. թեև ՀՀ ընդերքի օրենսգրքով նախատեսված է ընթացիկ մոնիթորինգը, բայց իրականացման չափորոշիչները և հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերը կանոնակարգված չեն: Ներկայումս մոնիթորինգի տվյալների բացակայությունը հնարավորություն է չի տալիս գնահատել ընդերքօգտագործման հետևանքով շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա իրական ազդեցություններն ու ռիսկերը, ինչպես նաև՝ նախաձեռնել համապատասխան կանխարգելիչ գործողություններ», - ընդգծել է Կարեն Կարապետյանը:

Հովհաննես Հովհաննիսյանը նշանակվեց ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 21-րդ և 34-րդ հոդվածի 3-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է. Հովհաննես Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար:

«Փաստի» անփաստարկ լուրը կամ ինչո՞ւ վերամբարձ հարցադրումներին հաջորդեց քար լռություն

Անցած շաբաթ «Փաստ» անվանումով թերթը և նույնանուն կայքը որոշեցին մի անգրագետ ու վերամբարձ հարցադրումներով կամիթ անել Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի մասին, իրենց էջերում զետեղելով մի լուր, ըստ որի՝ «նախարարը մոտ 150 միլիոն դրամի ծախս է կատարել ոչ թե բնապահպանական ծրագրերի, այլ միայն այդ ծրագրերի իրազեկման համար»: Ենթադրում ենք, որ նյութը տեղադրողները, ավելի շատ հույսները դրել էին ուրիշ կայքերի կողմից լուրի «բազմացման էֆեկտի» վրա, այլապես այդպես շուտափույթ չէին տպագրի հերքումը և այն հանի իրենց կայքից: Իհարկե, դա արվեց նախարարության Տեղեկատվական և հասարակության հետ կապերի վարչության պահանջից հետո միայն: Ընդ որում՝ այս ամենն արվեց առանց որևէ բացատրության: Նույնիսկ չբացատրվեց, թե որտեղից էր վերցվել այդ 150 միլիոն թիվը, ինչ ժամկետներում է եղել «անխոհեմ վատնումը» և այլն և այլն: Լուրը հանվեց կայքից, բայց ինտրիգներ սիրող մի քանի լրատվամիջոց, որ արդեն ուղղակի և անձնապես պատասխանատվություն չեն կրում, հանում թեմայի շահարկումների, շարունակեցին այն շրջանառել իրենց կայքերում: Մնում է եզրակացնել, որ «Փաստի» բուն նպատակը հենց դա էլ եղել է: Բայց մի՞թե պարզ չի, որ իրեն հարգող ցանկացած լրատվամիջոց և պարտավոր է ուշադիր լինել նույնիսկ այլ աղբյուրներից եկող տեղեկությունների տեղադրման հարցում, որովհետև ակնհայտ է, որ գործունեության «իրազեկման» համար 300 հազար դոլարից ավելի գումարի աննպատակ ծախսի մասին խոսելիս, ակամայից կարելի է ընկնել ֆանտաստիկայի ժանրի գիրկը: Իրոք, լուրջ թիվ է, դրա հետ

կատակ չեն անում: Պրոֆեսիոնալ լրագրության տարրական էթիկան պահանջում է պատասխանատու և ճշտորիտ լինել նման զգայուն հարցերում: Օրինակ, մենք չենք ասում չէ՞, որ կայքը քաղաքական պատվեր է կատարել, կամ՝ «Փաստ» թերթն ունի Բնապահպանության նախարարին անձնապես չհանդուրժելու մոտիվներ և այլն: Չենք ասում, որովհետև դեռևս չունենք դա հաստատող փաստեր: Այս ամենը խոսում է այն մասին, որ գործ ունենք ոչ թե մի մասնավոր վրիպակի կամ անփութության, այլ ծրագրված անազնիվ, նույնիսկ՝ հակաօրինական երևույթի հետ: Վերջերս, ինչպես հաճախ ենք տեսնում, մեր մի քանի կայքերի և թերթերի համար սուտն ու բանասարկությունները թթվածնի արժեք ունեն և երկի դա է նրանց իրականության հետ կապող միակ թելը: Բանն այն է, որ լրագրության մեջ, ըստ ճշտված վիճակագրության՝ բուն նյութը, ենթադրենք, կարդում են տասնյակ հազարները, ապա հերքումը՝ խիստ սահմանփակ թվով մարդիկ: Եվ սա չէին կարող չիմանալ իրենց նման ապատեղեկատվություն թույլ տվողները: Մնում է հարցնել «Փաստ» թերթին՝ իսկ ո՞ւր մնացին վերամբարձ հարցադրումները՝ անստորեն ծախսված 150 միլիոն դրամի մասին: Ինչո՞ւ են սակվել... Գարբաչովյան «պերեստրոյկայի» տարիներին մի գործիչ բնութագրելով դեմոկրատիա երևույթը սրամտորեն նկատել է՝ մեզանում ժողովրդավարությունը առայժմ այն է, երբ յուրաքանչյուր ոք ազատորեն իրավունք ունի հայտնելու իր կարծիքը, իսկ դիմացինն էլ՝ դրա համար իրավունք ունի խփելու նրա մտութին:

շարունակությունը էջ 7 /

«Փաստ» անպասարկ լուրը կամ ինչո՞ւ վերամբարձ հարցադրումներին հաջորդեց ֆար լուրթյուն

Սկիզբը էջ 6 /

Մի՞թե մինչ օրս դեռ դոփում ենք նույն տեղում ու այդպես էլ չենք հասկացել ազատ խոսքի իմաստն ու նշանակությունը: Իսկ եթե, այնուամենայնիվ, կայքն ուզում է հասկանալ, թե ինչ է կատարվում մեր ոլորտում, ինչ լուրջ հոգսեր ու խնդիրներ կան, ապա լավ կանի ուշադիր հետևի, թե ի՞նչ են անում մեր հանրային բնապահպանները, որոնց հրապարակած նույնիսկ ամենատուր և ամենակնճռոտ հարցերին նախարարությունը արձագանքում է անվթարթորեն և հենց դա է նապաստում մեր երկրի բնապահպանական պրոբլեմների լուծմանը: Համաձայնեք, այս պատմության մեջ հարցը բնավ էլ նախարար Արծվիկ Մինասյանը չէ, նա հանգիստ ու վստահ անում է իր գործը՝

հետևողական քայլերով կարգի բերում մեր երկրի բնապահպանական ոլորտը և նման կեղծ լուրերով ու տհաճ կամիքներով ստվերել ոլորտում նրա գործունեությունը, չի ստացվի: Ստվերել, պարզ է, չի ստացվի, բայց, ա՛յ մի կարճ ժամանակով ջուր պղտորել, հաստատ կստացվի: Մնում է ցավ ապրել, որ այսօրինակ կեղծարարությունը և ապատեղեկատվությունը մտել է մեր օրերի լրատվության երակների մեջ և հոսում են արյան հետ: Ուզում ենք հավատալ, որ նշված թերթը այս ամենից ճիշտ հետևություններ կանի:

«Բնություն» էլեկտրոնային թերթ



«Փաստ» օրաթերթի 27.04.2017 թ. թողարկման մեջ լուր էր հրապարակվել, որում ասվում էր, թե ՀՀ բնապահպանության նախարարը «մոտ 150 միլիոն դրամի ծախս է կատարել ոչ թե բնապահպանական ծրագրերի համար, այլ միայն այդ ծրագրերի մասին իրազեկելու համար»: ՀՀ բնապահպանության նախարարությունը հայտնում է, որ հրապարակված տեղեկատվությունն անբողջովին չի համապատասխանում իրականությանը: ՀՀ բնապահպանության նախարարությունը տնօրինում է միայն պետական բյուջեի միջոցները, իսկ պետական բյուջեով նախարարության համար նման գումարներ նախատեսված չեն, հետևաբար նման ծախսեր չեն կարող իրականացվել:



րակելուց առաջ դրանք ծշտել ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ, հակառակ դեպքում տպավորություն է ստեղծվում, որ լրատվամիջոցը միտումնավոր, կամ շահադիտական նպատակներով ապատեղեկատվություն է տարածում:

Պարբերականի խմբագրակազմը կամ նյութի հեղինակը պարտավոր էր գերատեսչության գործունեությանը վերաբերող նման տեղեկություններ հրապա-

«Բնությունը եւ մարդը» խորագրով ցուցահանդես Բնության պետական թանգարանում

այաստանի բնության պետական թանգարանում տեղի է ունեցել «Բնությունը և մարդը» խորագրով ցուցահանդեսը: Ներկայացվել են ՀՀ և ԽՍՀՄ-ի նկարիչների միության անդամ Թադևոս Տեր-Մեսրոպյանի և ՀՀ կիրառական արվեստի և դիզայնի միության անդամ Սուսաննա Խանամիրյանի «Տեր-Մեսրոպյան» նկարների համատեղ ցուցահանդեսը: Միջոցառման ընթացքում նաև ցուցադրվել է Թադևոս Տեր-Մեսրոպյանի մասին պատմող տեսաֆիլմը: Միջոցառմանը ներկա էին մշակույթի անվանի գործիչներ՝ Գեղեցիկ արվեստների ակադեմիայի ղեկավոր Էդուարդ Սեդրակյանը, Սանկտ Պետերբուրգի գրականու-



թյան ակադեմիայի անդամ, արվեստաբան, թարգմանիչ Էմմա Բուդաղյանը, ՀՀ կոմպոզիտորների միության անդամ Գայանե Քեսոյանը: Հրավիրված էին նաև միջազգային մրցույթի դափնեկիրներ, ովքեր հանդես եկան երաժշտական կատարումներով:

Հայկական լեռնաշխարհ՝ մարդկության բնօրրան եւ հացահատիկի հայրենիք

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո գտնվող «Էրեբունի» պետական արգելոցը, որը կազմավորվել է 1981 թ. 89 հա տարածքով, այժմ այն 118,75 հա է: Պետական արգելոցը ստեղծվել է պահպանելու վայրի ցորենների և այլ հացաբույսերի վայրի տեսակները: Արգելոցի ստեղծման համար հիմք են ծառայել դեռևս 1925-1928 թթ. ՀԴՀ պրոֆեսոր Ս. Գ. Թունանյանի կողմից կատարված ուսումնասիրությունները և նրա կողմից էլ հայտնաբերվել է այդ տարածքը: 1934 թ. Հայաստան այցելած ակադեմիկոս Ն. Ի. Վավիլովը անձամբ տեսնելով վայրի ցորենների այս բուսուտները, այն համարել է համաշխարհային հետաքրքրություն ունեցող տարածք և առաջարկել է առանձնացնել 50-100 հա տարածություն և հատուկ խնամքի տակ պահել, որպեսզի պահպանվի բույսերի զարգացման համաշխարհային նշանակություն ունեցող այս վկայականը: Արգելոցում, բնական պայմաններում, աճում են գիտությանը հայտնի չորս տեսակ վայրի ցորեններից 3-ը, ինչպես նաև՝ նրանց ազգակից վայրի հացահատիկային բույսերը, որոնք աչքի են ընկնում ներտեսակային բազմազանությամբ և դա փաստում է, որ մեր երկիրը ցորենի հայրենիք և քաղաքակրթության բնօրրաններից մեկն է: «Էրեբունի» պետական արգելոցում Կարմիր գրքում գրանցված 15 տեսակների (1. Ակտինոլեմա խոշորաբաժակ, 2. Շովիցիա գեղապտուղ, 3. Վարդատերեփուկ մուշկային, 4. Տերեփուկ երևանյան, 5. Շադինիա խոշորապտուղ, 6. ճարճատուկ գեղձավոր, 7. Կանգար վարդագույն, 8. Կաթնուկ Թաղտաշյանի, 9. Գագ խառն, 10. Հիրիկ նրբագեղ, 11. Բթաթեփուկ անքիստ, 12. Սերինոսախտ տարօրինակ, 13. Ցորեն արարատյան, 14. Ցորեն ուրարտու, 15. Լեպտունիս մագանման), որից 7 հազվագյուտ, 4 անհետացող տեսակների վրա նշագրված են փորձահրապարակներում: Արգելոցի ստեղծման հիմքում ընկած է այն գաղափարը, որ այստեղ են գտնվում ոչ միայն վայրի ցորենների այդ տեսակները, այլև Կարմիր գրքում գրանցված մի շարք անհետացող, հազվագյուտ բուսատեսակներ, այսինքն՝ այս վայրը նման բուսատեսակների մեկ ամբողջական յուրահատուկ համալիր է: Ստեղծման օրից այստեղ բազմաթիվ գիտնականների և գիտաշխատողների կողմից կատարվել են ուսումնասիրություններ և հրատարակվել են ավելի քան 20 գիտական հոդված: Հարկ է նշել, որ այստեղ իրականացվում է արգելոցային ռեժիմի խիստ պահպանություն: Ամեն տարի կատարվում է հակահրդեհային աշխատանքներ՝ արգելոցի սահմանային հատվածներում և վտանգավոր տեղամասերում ստեղծվում է հանքայնացման շերտեր: Կազմակերպության միջոցների հաշվին 2015 թ.-ին կատարվեց արգելոցի տարածքի չափագրում, սահմանների ճշտորոտում, քարտեզագրում և ներկայումս կազմակերպության ջանքերով, կատարված գիտական ուսումնասիրությունների արդյունքներից էլնելով արգելոցի տարածք 89 հա-ից դարձել է 118,75 հա:



Նյութը պատրաստեց Արթուր Խալաթյանը

Գիտարկվել է «BAT» անօդաչու թռչող սարքի հնարավորությունները

Կատարումն ՀՀ վարչապետի 2017 թ.-ի մարտի 24-ի N02/23.14/7057-17 հանձնարարականի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալությունում 2017 թվականի ապ-

րիլի 26-ին տեղի է ունեցել քննարկում «BAT» անօդաչու թռչող սարքի /ԱԹՍ/ կիրառումը ներդնելու թեմայով: Քննարկմանը ներկա էին «ԲԻՈԿՈՆՏՐՈՆԼ» ՍՊԸ և բնապահպանության նախարարության ստորաբաժանումների ներկայացուցիչներ: Ներկայացվել է ԱԹՍ-ի տեխնիկական բնութագիրը, օգտագործման հնարավորությունները բնապահպանության ոլորտում: Քննարկման արդյունքում ներկայացվել է առաջարկություն տվյալ ԱԹՍ-ի միջոցով կատարել փորձնական թռիչքներ բնության հատուկ պահպանվող տարածքներից մեկում և ստացված արդյունքների վրա կատարել ուսումնասիրություններ ԱԹՍ-ի լիարժեք հնարավորությունները գնահատելու համար:

Նախագիծը՝ Արծուն Պեղանյանի
 Խմբագիր՝ Սանվել Սկրչյան
 Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
 Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
 011 818 517